

ԲԱՌԱՅԻՆ ՇԵՇՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

ՍՈՆԱ ԽԱՐԲԵՐՏՅԱՆ

Այս հոդվածի շրջանակներում ուսումնասիրվում են հայերենի և անգլերենի բառային շեշտը և դրա առանձնահատկությունները՝ ըստ բնույթի, դիրքի, աստիճանավորման ու գործառույթի:

Նախքան հայերենի և անգլերենի բառային շեշտի առանձնահատկություններին անդրադառնալը, հարկ է հստակեցնել բառային շեշտի սահմանումը, արտահայտման միջոցները և տարբերակիչ հատկանիշները:

Բառային շեշտը սահմանվում է որպես բառի որևէ վանկի առանձնացում, որը կարող է իրականացվել տարբեր միջոցներով: Շեշտին՝ որպես լեզվական երևույթի, համապատասխանում են որոշակի ֆիզիկական երևույթներ՝ ձայնի բարձրություն և հատկապես ձայնաստիճանի բարձրություն, քանի որ շեշտված վանկերն ավելի բարձրաձայն են արտաբերվում, իսկ առանձին արտաբերված բառերի շեշտված վանկին բնորոշ է ձայնաստիճանի առկայություն: Շեշտը մի կողմից համարվում է բառի գոյության կարևոր նախապայման, մյուս կողմից շեշտի առկայությունը պայմանավորվում է բառի բազմավանկությամբ: Դիտարկելով այս խնդիրը՝ որոշ հայ լեզվաբաններ այն կարծիքն են արտահայտում, որ միավանկ բառերը զուրկ են շեշտից: Նրանց բառային շեշտի սահմանումները հենց դա էլ ապացուցում են: Օրինակ՝ Հ.Բարսեղյանն իր «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանում» սահմանում է շեշտը՝ որպես ոչ միավանկ բառի վանկերից մեկի ընտրում¹: Մ.Աբեղյանը նույնպես սահմանում է բառային շեշտը՝ որպես բազմավանկ բառերի վանկերից մեկի արտաբերություն՝ արտաշնչության ավելի մեծ ուժով, քան մյուսները²:

Բազմավանկ բառերի մեջ անշեշտ վանկերի հակադրության միջոցով ակնհայտ է դառնում շեշտված վանկի էությունը: Միավանկ բառերում նման

¹ **Բարսեղյան Հ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, 1973, էջ 75: Barseghyan H., Hayeren ughagrakan-ughakhosakan terminabanakan bararan, Yerevan, 1973

² **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տաղաչափություն, Մետրիկա, Երևան, 1971, էջ 19-33: Abeghyan M., Hayots lezvi taghachaputyun, Metrika, Yerevan, 1971

հակադրության բացակայության պատճառով շեշտի գոյությունը չի նկատվում:

Բոլոր լեզուներում շեշտի գաղափարը գոյություն ունի, սակայն նրա արտահայտման միջոցները տարբեր են: Այդ իսկ առումով լեզվաբանության մեջ ընդունում են երեք տեսակի շեշտ՝ ուժային կամ դինամիկ, քանակական և երաժշտական: Առաջին դեպքում շեշտված վանկն առանձնացվում է արտաբերության առավել ուժեղ լարվածությամբ, երկրորդ դեպքում նրա առանձնացմանը նպաստում է ձայնավորի արտասանության երկարությունը, երրորդում շեշտված վանկն առանձնանում է ձայնաստիճանի բարձրության փոփոխությամբ:

Բազմաթիվ լեզվաբաններ հայերենի համար ընդունում են դինամիկ կամ ուժային շեշտի գոյությունը, սակայն վերջինիս հարաբերությունը մնացած գործոնների (ձայնավորի արտասանության երկարության և ձայնաստիճանի բարձրության փոփոխության) հետ առայժմ ուսումնասիրված չէ:

Բառի սահմանների որոշումը լեզվաբանության դժվարին խնդիրներից մեկն է: Բառային շեշտի հարցը չի կարելի լուծել առանց այդ սահմանների ըմբռնման: Հնչյունական խոսքում բառերի առանձնացման համար մեծ դեր է խաղում բառային շեշտը: Միշտ չէ, որ բառի բառարանային ձևն արտահայտության պլանում կարող է ելակետ ծառայել, քանի որ հնչյունական շղթայում մի քանի այդպիսի ձևեր միանում են կամ անջատվում, և առաջ է գալիս մի նոր ձև՝ այսպես կոչված հնչյունական բառը: Որոշ շեշտազուրկ բառեր հանդես են գալիս շեշտակիր միավորների հետ միասին և ստեղծում նախահար և վերջահար բառեր: Հնչաբառերում նախահար են կոչվում այն անշեշտ բառերն ու մասնիկները, որոնք շեշտված բառին նախորդում են՝ կազմելով նրա հետ մի միություն, իսկ վերջահար են այն բառերը, որոնք շեշտված բառի վերջից են ավելանում³:

Այսպիսով, կարելի է ասել, որ յուրաքանչյուր առանձին արտասանված բառ ունի առնվազն մեկ առանձնացվող վանկ, որն ընկալվում է որպես շեշտված: Առանձին բառերի շեշտը կոչվում է բառային շեշտ, իսկ կապակցված խոսքի մեջ կոչվում է նախադասության շեշտ: Միավանկ բառերն ինքնաբերաբար շեշտ են կրում: Բազմավանկ բառերի վանկերից մեկն արտաբերությամբ ավելի է առանձնացվում մյուսներից: Վանկերից մեկի այսպիսի առանձնացումը կոչվում է բառային շեշտ:

³ **Թոխմախյան Ռ.**, Ժամանակակից հայերենի բառային շեշտը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, 1971, էջ 60-64: **Tokhmakhyan R.**, Zhamanakakits hayereni barayin sheshty, Lraber Hasarakakan Gitutyuneri N 2, 1971:

Համադրելով վերը նշված բոլոր կարծիքները՝ կարող ենք սահմանել բառային շեշտը՝ որպես բառի վանկերից մեկի կամ մի քանիսի առանձնացում՝ որոշակի հնչյունաբանական միջոցների օգնությամբ:

Հայերենի և անգլերենի հնչյունական կազմի և շեշտային կառուցվածքի ուսումնասիրությունը թույլ է տալիս բնութագրել բառային շեշտը ըստ հետևյալ չափանիշների.

- I. ըստ բառային շեշտի բնույթի,
- II. ըստ բառային շեշտի դիրքի,
- III. ըստ աստիճանավորման,
- IV. ըստ բառային շեշտի գործառնությունների

I. Լեզուների բառային շեշտի բնութագրման և նրանց զուգադրման համար նախ և առաջ անհրաժեշտ է հաշվի առնել շեշտի բնույթը, այսինքն՝ այն, թե ինչպիսի հնչյունական միջոցներով է իրականացվում շեշտը տվյալ լեզվում: Այս առումով լեզուներն առաջին հերթին իրարից տարբերվում են շեշտի իրականացման արտասանական միջոցներով: Համաձայն ոլորտի մի շարք հեղինակների, ինչպիսիք են՝ Հ. Աճառյանը, Գ. Ջահուկյանը, Մ. Աբեղյանը և այլք, բառային շեշտի հիմնական տիպերն են ուժգնայինը և դինամիկը, իսկ մնացած տիպերը կարելի է համարել լրացուցիչ, հիմնական տիպերի հետ զուգընթաց գոյություն ունեցող:

Հայերենի շեշտի բնույթի մասին Հ. Աճառյանը կատարում է հետևյալ դիտարկումը. նա գտնում է, որ թեև հայերենում շեշտը ուժգնության բնույթի է, սակայն այն ցայտուն արտահայտություն չունի⁴:

«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը, խոսելով հայերենի շեշտի բնույթի մասին, նշում է, որ այն ուժային է, և տևողության ու տոնայնության հատկանիշները լրացական դեր ունեն⁵:

Հայերենի բառային շեշտի առանձնահատկությունների մասին խոսելիս հարկ է նշել, որ հայագետներն այս հարցում գրեթե տարաձայնություններ չունեն: Հայերենի շեշտային համակարգը բնութագրվում է դինամիկ կամ ուժային շեշտով, սակայն շեշտված վանկերի ձայնավորներն ավելի տևական են հնչում, քան անշեշտ վանկերի ձայնավորները:

⁴ **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1971, էջ 349: Atjaryan H., Liakatar kerakanutyun hayots lezvi, Yerevan, 1971:

⁵ **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 111: Djahukyan G., Hayots lezvi zargatsumy yev karutsvatsky, Yerevan, 1969:

Անգլերենում բառային շեշտը ուժային և երաժշտական է, որը բնութագրվում է շեշտվող ձայնավորի հնչողության փոփոխությամբ: Այն կարելի է սահմանել որպես բառում մեկ կամ երկու վանկերի առանձնացում, որը իրականացվում է արտաբերման ուժի, ձայնի բարձրության, հնչյունի որակական և քանակական հատկանիշների փոփոխության շնորհիվ⁶:

II. Մյուս չափանիշը, ըստ որի՝ կարելի է բնութագրել բառային շեշտը, շեշտի դիրքն է; Ըստ այս սկզբունքի՝ լեզվաբանները տարբերակում են կայուն և ազատ շեշտ:

Կայուն շեշտ ունեցող լեզուներում շեշտվում է բառի մեջ որոշակի դիրք զբաղեցնող վանկը: Այսպես, օրինակ, հայերենում, որպես կանոն, շեշտվում է վերջին վանկը: Հայերենի շեշտը կայուն է և, որպես օրենք, ընկնում է վերջին ձայնավորի վրա:

Այս կանոնից շեղվում են՝ ա) հարաշեշտ բառերը (*ա՛ստղ, ա՛րկղ, տա՛րր* և այլն), որոնց երկրորդ վանկը կազմված է *ր*-ով, որը հայերենում շեշտագուրկ է; բ) *մա՛նավանդ, նա՛մանավանդ* տիպի բառերը, գ) բառեր, որոնց շեշտը կարող է ընկնել թե՛ առաջին և թե՛ վերջին վանկի վրա (*ա՛յսպես, ա՛յդպես, այսքա՛ն, այդքա՛ն*), դ) կոչականները, որոնցում շեշտը կարող է ընկնել ինչպես առաջին ու վերջին վանկերի վրա, այնպես էլ միջին վանկի վրա, ե) հարադրյալ բառերը, որոնցում շեշտվում է նախադաս հարադիրը (*ցո՛ւյց տալ, մո՛տ գալ*), գ) բայերի ժխտական բաղադրիչը (*չե՛մ տա, չե՛մ գրում*):

Հայերենի բառային շեշտը համարվում է նաև կայուն-շարժական. բառի նորանոր վանկերի առաջացման դեպքում շեշտն ընկնում է միշտ վերջին վանկի ձայնավորի վրա, ինչպես օրինակ՝ *քաղա՛ք-քաղաքի՛, քաղաքների՛, քաղաքաբնա՛կ, քաղաքաբնակնե՛ր, քաղաքաբնակների՛* կամ *ծա՛ռ – ծառե՛ր – ծառերի՛* և այլն:

Ազատ շեշտ ունեցող լեզուներում բառի ցանկացած վանկ կարող է շեշտված լինել, այսինքն՝ շեշտի դիրքը նման լեզուներում կարող է լինել կանխատեսելի, երբ շեշտի դիրքը պայմանավորված է որոշակի կանոններով, կամ անկանխատեսելի, երբ շեշտի դիրքը հնարավոր չէ գուշակել: Այս դեպքում շեշտը հանդես է գալիս որպես բառային կառուցվածքի բաղադրիչ, որն անհրաժեշտ է հիշել բառիմաստի հետ մեկտեղ:

⁶ Crystal D., The past present and future of English rhythm, pp. 8-10 http://mobile.david-crystal.com/DC_articles/English46.pdf

Անգլերենում բառային շեշտը համարվում է ազատ, սակայն հարկ է նշել, որ գոյություն ունեն որոշ գործոններ, որոնք կանխորոշում են շեշտի դիրքը անգլերենում⁷:

- ռեցեսիվ (նահանջող)
- ռիթմիկ
- պահպանող
- իմաստային

Ռեցեսիվ միտումը դրսևորվում է սահմանափակ և անսահմանափակ տիպերով: Գերմանական լեզուներից փոխառված բառերում շեշտն ընկնում է առաջին վանկի վրա, օրինակ՝ *'father, 'mother, 'husband, 'wonder, 'clever, 'body, 'water, 'singing*, մինչդեռ անգլիական ծագում ունեցող բառերում շեշտակիր է համարվում բառարմատը, օրինակ՝ *a'mong, be'come, be'fore, for'get, mis'take* և այլն:

Ռիթմիկ միտումն ապահովում է անգլերենում շեշտված և անշեշտ վանկերի հաջորդականությունը, օրինակ՝ *revo'lution, organi'sation, as,simi'lation, ar'ticulate* և այլն:

Պահպանող միտումն ապահովում է գլխաբառի շեշտը՝ *'person - 'personal, 'wonder - 'wonderful - 'wonderfully*, իմաստային գործոնը դրսևորվում է բարդ և ածանցյալ բառերի հավասարազոր անդամների կրկնակ շեշտով՝ *'hard-'working, 'blue-'eyed, 'sit 'down, 'take 'off, 'four'teen, 'six'teen* և այլն:

III. Հաջորդ հատկանիշը, ըստ որի կարելի է բնութագրել բառային շեշտը հայերենում և անգլերենում, բառային շեշտի աստիճանավորումն է: Կարելի է եզրակացնել, որ հնչյունաբանական տեսանկյունից բազմավանկ բառն ունի շեշտի այնքան աստիճան, որքան վանկ, սակայն տարբերակում են շեշտի երեք աստիճան՝ գլխավոր, երկրորդական և թույլ:

Գլխավոր և երկրորդական շեշտ ունեցող վանկերը կոչվում են շեշտված, իսկ թույլ շեշտ ունեցող վանկերը՝ անշեշտ, ընդ որում կան լեզուներ, որտեղ առանձնացվում է շեշտի երկու աստիճան, այսինքն՝ հակադրվում են շեշտված և անշեշտ վանկերը:

Որպես կանոն հայերենում բառն ունենում է մեկ հիմնական շեշտ: Որոշ բառեր և հատկապես բաղադրյալ բառեր ունենում են նաև երկրորդ շեշտ, ինչպես օրինակ՝ *ջե'րմա'էլեկտրակենտրո'ն, ու'լորամանուշակագու'յն, վե'ր-երկրյա', հա'կակառավարակա'ն, գե'րհոգնածություն'ն, հե'ծանվավա'զք, հու'շա-*

⁷ Vassilyev V.A., English Phonetics: A theoretical course – M., 1970, p. 278.

կրծքանշա՛ն և այլն: Այդ կրկնակ շեշտերը տարբերվում են իրենց ուժգնությամբ. մեկն ավելի ուժեղ է, մյուսը՝ համեմատաբար թույլ: Ուժեղ շեշտն ընկնում է բառի վերջին վանկի վրա և կոչվում է հիմնական կամ գլխավոր շեշտ, թույլն ընկնում է բառի առաջին բաղադրիչի առաջին կամ վերջին վանկի վրա և կոչվում է երկրորդական շեշտ:

Հայերենում շեշտադրման ընդհանուր կանոնից բացառություն են կազմում մի քանի կցական բարդություններ, որոնցում շեշտն ընկնում է առաջին վանկի վրա: Ըստ երևույթին, նախկինում լինելով հարադրական բարդություններ՝ դրանց վերջադիր երկրորդ բաղադրիչը շեշտ չի ընդունել և հարել է շեշտակիր՝ առաջին բաղադրիչին, ինչպես, օրինակ՝ *մի՛թե, նու՛յնիսկ, նու՛յնպես, նու՛յնչափ, ե՛րբևէ, ե՛րբևիցե* և այլն: Այս կարգի բառերում նկատվում է շեշտի վերջին վանկի տեղափոխման որոշակի միտում:

Շեշտադրման անկանոնություն նկատվում է նաև *-երորդ* բաղադրիչով կազմված մի շարք դասական թվականներում և դերանուններում: Ինչպես՝ *հի՛նգերորդ, վե՛ցերորդ, ո՛րերորդ, քանի՛երորդ, փասնյո՛թերորդ, քսանհի՛նգերորդ* և այլն⁸: Երկրորդական շեշտերն առավել հստակորեն տարբերվում են բարդ բառերում, երբ երկրորդ շեշտի առկայությունը կարծես, ընդգծում է, թե տվյալ միավորը ինչ մասերից է կազմված, օրինակ՝ *կո՛ւակազմակերպություն, բնա՛կկառավարչություն, էլեկտրա՛մեքենաշինական*:

Բազմաթիվ լեզվաբաններ (Գ. Տորսուն, Մ. Սոկոլովա) անգլերենի դեպքում առանձնացնում են շեշտի երեք աստիճան՝ գլխավոր, երկրորդական և թույլ, օրինակ՝ *'funda'mental, ex,peri'mental, in,vesti'gation*, մինչդեռ ամերիկյան լեզվաբաններն առաջարկում են շեշտի չորս աստիճանավորում՝ գլխավոր, երկրորդական, երրորդական և թույլ, օրինակ՝ *in,divi,dua'li,zation*⁹:

IV. Բառային շեշտի բնութագրման հաջորդ չափանիշը շեշտի գործառույթներն են: Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել բոլոր լեզուների բառային շեշտին բնորոշ հետևյալ գործառույթները՝ բառաձևավորող, ճանաչողական և իմաստազատիչ:

1. Բառաձևավորող (կոնստիտուտիվ) գործառույթի շնորհիվ բառի վանկերը միավորվում են ավելի մեծ միավորի՝ մեկ բառի սահմաններում. ոչ մի բառ չի կարող գոյություն ունենալ առանց շեշտի:

⁸ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1974, էջ 76-82: Abeghyan M., Hayots lezvi tesutyun, Yerevan, 1974:

⁹ Trager G. L. and Smith H. L., An Outline of English Structure, Washington, 1957, p. 37.

2. Ճանաչողական գործառույթը հնարավորություն է տալիս ունկնդրին ճանաչելու վանկերի հերթականությունը՝ որպես բառի շեշտային կադապար: Բառերի ճիշտ շեշտադրումը հեշտացնում է հաղորդակցությունը, մինչդեռ բառի շեշտային կադապարի աղավաղումը կարող է համարյա անհնար դարձնել արդյունավետ հաղորդակցությունը: Այսպիսով, բառային շեշտը կատարում է նաև ճանաչողական գործառույթ:

Հարկ է նշել, որ բառային շեշտի այս երկու գործառույթները բնորոշ են և՛ հայերենին և՛ անգլերենին, սակայն հաջորդ գործառույթը կարող է իրականացվել միայն ազատ շեշտ ունեցող լեզուներում:

3. Իմաստազատիչ կամ հակադրող գործառույթն այն է, որ բառային շեշտի միջոցով որոշ լեզուներում հնարավոր է տարբերակել բառի բառարանային կամ քերականական իմաստները: Այս դեպքում բառային շեշտի կադապարները կազմում են հակադրություններ:

Անհրաժեշտ է նշել, որ որոշ լեզվաբաններ առանձնացնում են ոչ թե իմաստազատիչ գործառույթ, այլ տարբերակում են ձևաբանական և շարահյուսական գործառույթները: Ձևաբանական գործառույթի շնորհիվ հակադրվում են տարբեր բառային դասերը կամ բառերի տարբեր քերականական ձևեր¹⁰:

Օրինակ՝ գոյական – բայ

an 'import - to im'port, a 'present- to pre'sent, a 'frequent- to fre'quent, a 'record- to re'cord, a 'handout- to 'hand 'out, a 'runaway- to 'run a'way, a 'dropout - to 'drop 'out

Շարահյուսական գործառույթը հնարավորություն է տալիս տարբերակելու բարդ բառերը ազատ շարահյուսական կապակցություններից:

Օրինակ՝ *a 'dancing girl (պարուհի) - a 'dancing 'girl (պարող աղջիկ),*

a 'loudspeaker (բարձրախոս) - a 'loud 'speaker (բարձրաձայն խոսող),

a 'blackbird (կենդենի) -a 'black 'bird (սև թռչուն),

a 'goldfish (սկզե ձկնիկ) - a 'gold 'fish (սկզեգույն ձկնիկ):

Այսպիսով, բառային շեշտը հայերենում և անգլերենում ունի մի շարք ընդհանրություններ: Երկու լեզուներում նրան բնորոշ են բառաձևավորող, ճանաչողական գործառույթները, սակայն անգլերենի շեշտը կատարում է նաև իմաստազատիչ գործառույթ. այն հակադրում է տարբեր խոսքի մասերին

¹⁰ Шевченко Т.И. Теоретическая фонетика английского языка. М., 2006, стр. 80.

պատկանող բառեր, ինչպես նաև բարդ բառերը տարբերում է ազատ շարահյուսական կառույցներից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել է հայերենի և անգլերենի բառային շեշտը՝ ըստ բնույթի, դիրքի, աստիճանավորման ու գործառույթի: Ըստ բնույթի՝ բառային շեշտը և՛ հայերենում, և՛ անգլերենում համարվում է ուժգնային: Հայերենում բառային շեշտի դիրքը կայուն-շարժական է, մինչդեռ անգլերենում այն ազատ է: Շեշտի տեսակները, ըստ աստիճանավորման, լինում են գլխավոր, երկրորդական և թույլ: Բառային շեշտին բնորոշ են բառաձևավորող, ճանաչողական և իմաստազատիչ գործառույթները:

Բանալի բառեր - բառային շեշտ, շեշտի բնույթ, իմաստազատիչ գործառույթ:

ОСОБЕННОСТИ СЛОВЕСНОГО УДАРЕНИЯ В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

СОНА ХАРБЕРТЯН

Изучение фонетической системы и акцентуальной структуры армянского и английского языков дает возможность проанализировать словесное ударение по ряду типологических признаков: по природе, по месту, по степени и по функциональным особенностям. Словесное ударение как в армянском, так и в английском языках является по своей природе динамическим или же силовым, а по месту ударения в слове считается целесообразным отметить, что английский и армянский языки в этом аспекте значительно отличаются друг от друга. Армянское ударение можно в типологическом плане рассмотреть как более постоянное и менее подвижное, а английское ударение – свободное. В обоих языках лингвистически значимыми являются три степени ударности: главное (сильное), второстепенное (слабое) и безударное (нуль ударения). Различаются три функции словесного ударения: конститутивная (образовательная) функция, опознавательная функция (рекогнитивная) и дистинктивная функция – слова с аналогичной звуковой структурой, которые отличаются в речи только по их ударению.

Ключевые слова - словесное ударение, второстепенное ударение, конститутивная функция, дистинктивная функция.

WORD STRESS FEATURES OF THE ARMENIAN AND ENGLISH LANGUAGES

SONA KHARBERTYAN

This article is concerned with the nature, position, grading and function of word stress in both Armenian and English languages. The nature of word stress in both languages is dynamic. The position of word stress in Armenian is fixed while in English is free or variable. The English has been described as having three levels of stress: Primary (stressed), secondary (half-stressed) and weak (unstressed). In English stress is phonemic, that is it can serve to distinguish otherwise identical words and change the meaning and class of words as well. The position of the stress also helps to understand the word and as a result speakers communicate rapidly and accurately.

Key words - word stress, nature, position, degree, functional aspect.